ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«07» ապրիլի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի կանայք, մայրեր

Այսօր Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ավետման տոնը, որը հայտնի է նաև որպես Մայրության տոն: Մեր ազգային ավանդույթներն ու տեսակն առանձնակի են կարևորում հայ մայրերի դերը: Դուք ձեր անսահման հավատով և անպատմելի նվիրվածությամբ զարդարում եք մեր կյանքը՝ մշտապես լինելով կյանքի շարունակության և մեր արժեքների պահպանության խորհրդանիշները: Հայկական իրականության մեջ հայոց մայրերը եղել են օջախի, բնօրրանի հենասյունն ու պահպանման գրավականը:

Հայ մայրերից յուրաքանչյուրն ամենօրյա հերոսությամբ հաղթահարելով կյանքի ցանկացած մարտահրավեր՝ կարողանում է կրթել, դաստիարակել, արարել, ստեղծել ու չհանձնվել:

Սիրելի մայրեր, շնորհավորում եմ ձեզ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, թող ձեր ընտանիքներում հարատևի առողջությունը, սերը, երջանկությունն ու խաղաղությունը: Թո՛ղ գարուններն ու ժպիտները ձեր կյանքում անպակաս ու անսպառ լինեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ